ՆԱԽԱՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՀՐԱՎԵՐ

1-ին փուլ

«ԱյԴի Բանկ» փակ բաժնետիրական ընկերություն, հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Վարդանանց 13,

Հրավերի նկարագիր՝ մասնագիտացված կահույքագործ կազմակերպությունները հրավիրվում են նախաորակավորման՝ Բանկի կահույքի ձեռք բերման գործընթացներում ներգրավելու համար:

Սույն հրավերով սահմանված պայմաններին բավարարող մասնակիցները կընդգրկվեն «ԱյԴի Բանկ» ՓԲԸ նախաորակավորված մասնակիցների ցանկում և սույն հրավերի հրապարակման պահից մեկ տարվա ընթացքում ուղղակիորեն կկարողանան մասնակցել Բանկի կողմից իրականացվող կահույքի ձեռք բերման ծրագրերի շրջանակներում կազմակերպվող մրցույթներին:

Նախաորակավորման փուլում կընդգրկվեն բոլոր այն մասնակիցները, որոնք կներկայացնեն սույն հրավերի շրջանակներում պահանջվող բոլոր փաստաթղթերը և կբավարարեն սահմանված չափանիշներին:

Հետաքրքրված մասնակիցներից պահանջվում է ներկայացնել հետևյալ փաստաթղթերը և նշված պահանջներին համապատասխանելու վերաբերյալ փաստաթղթային հիմնավորումները՝

Նախաորակավորման չափանիշներ՝

- առնվազն 3 տարվա փորձ տվյալ ոլորտում, կազմակերպությունների տարածքներում (կատարած աշխատանքների ու դրանց ծավալների մասին կազմակերպության տնօրենի կողմից վավերացված տեղեկանք), խոշոր ընկերություններում կատարված աշխատանքների ցանկ, բանկային/ֆինանսական ոլորտում կատարված աշխատանքները կարող են դիտարկվել որպես առավելություն:
- մեկ օրացուցային տարվա ընթացքում 50 000 000 (հիսուն միլիոն) ՀՀ դրամ և ավել պատվերների իրականացում, կատարված աշխատանքների հիմքեր:
- Հարկային պարտավորությունների առկայության կամ բացակայության մասին տեղեկատվություն, որը չի կարող մեկ ամսից ավել վաղեմություն ունենալ:

Նախաորակավորում կարող են ստանալ մասնակից այն իրավաբանական անձինք կամ անհատ ձեռնարկատերերը, որոնք և որոնց սեփականատերերը կամ բաժնետերերը

- ներգրավված չեն կամ ներգրավված չեն եղել սնանկության վարույթում կամ չեն հանդիսացել սնանկության վարույթում ընդգրկված իրավաբանական անձի սեփականատերեր կամ բաժնետեր,
- չունեն չկատարված պարտավորություն, որի գծով առկա է դատական գործ կամ հարկադիր կատարման վարույթ,
- վերջին երեք տարիներին չեն ունեցել չկատարված պարտավորություն որոնց գծով առկա է եղել դատական գործ կամ հարկադիր կատարման վարույթ և նրանց վերաբերյալ առկա չի եղել հարուցված քրեական գործ կամ հարուցված քրեական գործը չի ավարտվել արդարացնող ակտով:

- **Փաստաթղթերի ներկայացման կարգ՝**

փաստաթղթերը ներկայացվում են էլեկտրոնային տարբերակով՝ նշելով՝ ՆԱԽԱՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՀԱՅՏ **մասնագիտացված կահույքագործ կազմակերպություն**

Ներկայացնել բացառապես procurement@idbank.am էլեկտրոնային հասցեին ուղարկելու միջոցով
Հարցերի դեպքում դիմել՝ Սոնյա Ղևոնդյանին՝ հեռ. 093 04 08 08,

Ներկայացման լեզու՝ հայերեն,

ժամկետ՝ 10/01/2025թ.:

2-րդ փուլ

«ԱյԴի Բանկ» ՓԲԸ նախաորակավորումը ստացած անձանց՝ ԱյԴի Բանկ ՓԲԸ կողմից տարվա ընթացքում կուղարկվեն համապատասխան ծավալաթերթ, աշխատանքների

կատարման վայր, գծագրեր և տեխնիկական բնութագիր ներառող հարցումներ՝ գնային առաջարկ ներկայացնելու համար:

ԳՆԱՅԻՆ ԱՌԱՋԱՐԿ պարունակող փաստաթղթերը ներկայացվում են ծրարավորված, որը պետք է լինի սոսնձված և կնքված այն ներկայացնողի կողմից: Ծրարը և Մասնակցի կազմած փաստաթղթերը պետք է ստորագրված լինեն կազմակերպության ղեկավարի կամ վերջինիս լիազորված անձի կողմից:

Առաջարկվող գինը ապրանքների, աշխատանքների և ծառայությունների արժեքից բացի պետք է ներառի փոխադրման (Բանկի գլխամասային գրասենյակ), ապահովագրման, տուրքերի, հարկերի, այլ վճարումների գծով ծախսերը:

ԳՆԱՅԻՆ ԱՌԱՋԱՐԿ ՊԱՐՈՒՆԱԿՈՂ ԾՐԱՐԸ Ներկայացնել բացառապես Սոնյա Ղևոնդյանին (կոնտակտային տվյալներ՝ հեռ 093 04 08 08)